Արձանագրություն N 2

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

ք. Երևան

29.01. 2019 թ.
Ժամ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Մարտիրոսյան, Ա.Կարապետյան, Ա.Մինասյան, Ա.Գասպարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա.Խաչատրյան)

1.1 «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

1	«Ֆոտոն» ՍՊԸ
2	«ՆՈՐՔ-7» ՍՊԸ
3	«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ
4	ԴԱՆՆԻԿ
5	«ՊՐՈՖ-ՕՖԻՍ» ՍՊԸ
6	«Գալիմա» ՍՊԸ

2.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա.Խաչատրյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակիցների անվանումները					
		Ֆոտոն ՍՊԸ	ՆՈՐՔ-7 ՍՊԸ	ԼԵԲՐՈՆ ՍՊԸ	ԴԱՆՆԻԿ ՍՊԸ	ՊՐՈՖ-ՕՖԻՍ ՍՊԸ	Գալիմա ՍՊԸ
		ԱԱՀ-ով	ԱԱՀ-ով	ԱԱՀ-ով	ԱԱՀ-ով	ԱԱՀ-ով	ԱԱՀ-ով
1	Սննդամթերքի փաթեթ	2316336	2095062	2295150	2059200	3295600	1650000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա.Խաչատրյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման մասին

(Ա.Խաչատրյան)

4.1 Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի ***15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա.*** որոշեց նիստը կասեցնել, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Խաչատրյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019 թվականի փետրվարի 5-ին ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ, 321/1 սենյակ հասցեում բանակցությունների վերջնաժամկետ սահմանելով 15 րոպե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝		Ա.Խաչատրյան
Անդամներ՝		Հ.Մարտիրոսյան
		Ա.Կարապետյան
		Ա.Մինասյան
		Ա.Գասպարյան
Համակարգող՝		Վ. Մեժունց